

точноармянского и западноармянского языков. В начальный период наблюдалось стремительное развитие западноармянского языка, и важную роль в этом процессе сыграли представители Ордена Мхитаристов. Изучение ашхарабара в их книгах показывает, что мхитаристы уделяли большое внимание западноармянскому языку, очищая и обогащая его лексику и стабилизируя его грамматический строй. Если до 90-ых годов 18в. и в первой четверти 19в. на западноармянский язык оказали значительное воздействие грабар, турецкий язык, ряд диалектов (особенно на лексику), то начиная с 20-ых годов язык мхитаристов очищается и упорядочивается. В этом смысле большую роль играют М. Себастаци, Х. Кюрехян, Г. Инчилян, Ов. Зограбян и другие.

## WESTERN ARMENIAN LANGUAGE DEVELOPMENT PROCESS FROM 1700'S TO 1840'S

*T. A. Asoyan*

The division of ashkharabar (new Armenian) led to the formation and development of the eastern and western Armenian languages.

Western Armenian developed quickly in the first stage, the representatives of Mkhitarist congregation played an important role in this process. They showed considerate attitude to western Armenian, purifying and enriching the vocabulary and setting the grammatical structure. If eastern Armenian was under the influence of grabar (old Armenian) till 1790s and in the first quarter of 19<sup>th</sup> century was under the influence of dialects and the Turkish language, then in the 20<sup>th</sup> century the language of Mkhitarists became pure and stable.

## ԲԱՑԱՌԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՆՎՆԵՐՈՎ ԳՈՅԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**Ս. Կ. ԽԱՆԴԱՆՅԱՆ**

*Գղչ դասախոս*

Արդի հայերենի գրավոր և բանավոր հաղորդակցման ընթացքում մենք գործածում ենք բացառական և գործիական հոլովներով գոյական որոշիչ ունեցող գոյականական բառակապակցություններ: Եթե փորձենք այս բառակապակցությունները դասակարգել ըստ իրենց բովանդակության և իմաստային դրսևորումների, կնկատենք, որ սրանց գործածության դաշտը ավելի փոքր է, քան ուղղական և սեռական հոլովներով գոյական որոշիչ ունեցող գոյականական բառակապակցություններում: Կարող ենք ասել, որ գոյականի ուղղական հոլովով գոյականական բառակապակցություններն ունեն մոտ 25, իսկ սեռական հոլովով գոյականական բառակապակցությունները՝ 30 իմաստային խմբեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործիական որոշիչները բացառականի համեմատ ավելի հաճախ են հանդիպում, իսկ ներգոյականով որոշիչները՝ հազվադեպ, միայն մի շարք դեպքերում: Եղածները օտարաբանություն են, բայց հայերենում առկա իրողություններ. այսպես՝ Հայաստանում Ամերիկա-

յի ներկայացուցիչը, Ռուսաստանում Հայաստանի ներկայացուցիչը:

Բացառական հոլովով գոյական որոշիչները հստակ տարբերվում են իրենց ձևով: Սրանք իրենց իմաստով համարժեք են նույն բառերից կազմված ածականական որոշիչներին, ինչպես բրդից // բրդե գուլպա, ոսկուց // ոսկե մատանի և այլն: Սրանց նրբերանգային տարբերությունն այն է, որ «... բացառականով գոյական որոշիչն ավելի ընդգծում է ինչից պատրաստված լինելը, մինչդեռ ածական որոշիչը նշում է սոսկ ինչից լինելը: Այդ է պատճառը, որ բացառականով որոշիչների դեպքում թվում է, թե զեղչված դերբայ կա: Այսպես. մարմարից թանաքաման բառակապակցության մեջ կարծես զեղչված է պատրաստված դերբայը /մարմարից պատրաստված թանաքաման/, կամ բրդից գուլպա-յի մեջ կարծես զեղչված է գործված-ը /բրդից գործված գուլպա/ և այլն:

Սակայն այս թվացող զեղչումներին կարևորություն պետք չէ տալ, քանի որ արդի հայերենին միանգամայն հարազատ են թե բացառականով որոշիչ-որոշյալի անմիջական կապը՝ պլատինից մատանի, և թե դերբայական միջնորդավոր կապը՝ պլատինից պատրաստված մատանի: Ընդ որում, սրանց միջև իմաստային որոշ տարբերություն կա»<sup>1</sup>:

Նկատելի է, որ բացառականով որոշիչները որոշյալի համեմատ կարող են լինել և նախադաս, և հետադաս:

Բացառական հոլովով գոյական որոշիչները ընդգրկում են կյանքի տարբեր բնագավառները, ուստի իրենց բովանդակությամբ և իմաստային դրսևորումներով չափազանց բազմազան են: Ստորև կփորձենք ներկայացնել բացառական հոլովով գոյական որոշիչ ունեցող բառակապակցություններն ըստ հնարավոր խմբավորումների:

- Ազգակցական հարաբերություն արտահայտող բառեր. կտակ հորից, ժառանգություն ծնողից, խրատ մորից, համբույր քրոջից, խորհուրդ եղբորից, մորից որբ, հարսից նվեր և այլն:

- Տարբեր զբաղվածության հարաբերություն արտահայտող բառեր. նամակ ընկերոջից, խրատ վարպետից, խորհուրդ մասնագետից, պահանջ տնօրենից, դիմում ուսանողից, նկատողություն ղեկավարից և այլն:

- Անձնանիշ հասարակ անուններ ցույց տվող բառեր, որոնք արտահայտում են

ա/ տարիքային հարաբերություն. վախ ծերուկից, օգնություն երիտասարդից, մանկուց որբ,

բ/ տեղային հարաբերություն. օգնություն գյուղացուց, բացատրություն քաղաքացուց, նմանակում օտարերկրացուց, լուր արտասահմանցուց,

գ/ սեռային հարաբերություն. ամոթ տղամարդուց, վախ անուսնուց, ժառանգություն պապիկից, օրհնանք տատիկից:

- Ազգային հարաբերություններ արտահայտող բառեր. նվեր հայից, օգնություն ռուսից, նպաստ ամերիկացուց, խորհուրդ անգլիացուց և այլն:

- Նյութ ցույց տվող բառերի անվանումներ, որոնք ունեն բաղկացության իմաստ. բրդից գուլպա, թղթից տնակ, ոսկուց մատանի, արծաթից շերեփ, թիթեղից վառարան, մետաքսից վարագույր, երկաթից դուռ, թունավորում գազից, մարմարից արձան, հողից պատ և այլն:

<sup>1</sup> Ռ. Իշխանյան, ԺՀԼ շարահյուսություն, Երևան, 1986, էջ 144:

- Բնության և ֆիզիկական երևույթների անվանումներ ցույց տվող բառեր, որոնք ունեն ներգործման, ազդեցության, պատճառի իմաստ. վնասվածք հարվածից, հրդեհ շոգից, երաշտ քամուց, զառանցանք ջերմությունից, սարսուռ ցրտից, թմբիր շոգից:

- Մի շարք տեղանիշ գոյականների անվանումներ ցույց տվող բառեր. օգնություն թիկունքից, վարակ շրջապատից, հուշում դահլիճից, նամակ արտասահմանից, հարված ճակատից, կանչ հայրենիքից, ձայն անապատից, բարեկամություն սփյուռքից, ջուր աղբյուրից /ջրհորից/, ձայն դրսից, հայացք վերևից, հարված կողքից, ցավ ներսից, ցնցում ներքևից և այլն:

- Կենցաղային իրերի և տեխնիկական սարքավորումների անվանումներ ցույց տվող բառեր. զանգ հեռախոսից, աղմուկ հաստոցից, ջուր ամանից, հյութ բաժակից, կերակուր փսեից:

- Տարբեր մասնագիտություններ և գիտաեզրեր արտահայտող բառեր, որոնք ունեն մասնական իմաստ. առաջադրանք հայոց լեզվից, վարժություն մաթեմատիկայից, թեորեն երկրաչափությունից, դաս քիմիայից, օլիմպիադա պատմությունից, մրցույթ շախմատից, անգիր բանաստեղծությունից, հատված պատմվածքից, մեջբերումներ վեպից, տողեր երգից, մաս պիեսից, քառյակ բանաստեղծությունից, և այլն: Վերջիններս ունեն նաև մասի և ամբողջի հարաբերության իմաստ:

- Բուսական աշխարհի անվանումներ ցույց տվող բառեր, որոնք հանդես են գալիս բաղկացության իմաստ արտահայտող մի շարք կապակցություններում. պսակ տերևից /ծաղկից/, փունջ կակաչից, մանուշակից իկոբանա, ծաղիկներից փունջ, վարդից օշարակ, թթից օղի և այլն:

- Ժամանականիշ գոյականներում. որոշում այսօրվանից, օգնություն վաղվանից, խոստումներ երեկվանից, գործեր անցած տարվանից, որբ մանկությունից, ժառանգություն հնուց, հիշատակ վաղուց:

- Մի շարք զգացական գոյականներում. ցավ խղճից, լաց սուգից, սարսափ վախից, սարսափ անկումից, ճիչ ցավից, խինդ երջանկությունից, տառապանք կարոտից, ճիչ վախից, մահ նախանձից և այլն:

- Որոշ հավատալիքների անվանումներ արտահայտող կապակցություններում. աստծուց օրհնյալ, կտոր հացից, պատիժ երկնքից, վախ չար աչքից, սարսափ անեծքից, վախ աստծուց, պարզե երկնավորից, պատիժ բարձրյալից և այլն:

Գործիական հոլովով գոյականական որոշիչները իրենց բովանդակությամբ և իմաստային տեսակներով ավելի բազմազան են բացառական հոլովով գոյականական որոշիչների համեմատությամբ: Սրանք ունեն քերականական կայուն ձև, այն է -ով, երբեմն –մբ վերջավորություններ: Ստորև ներկայացնում ենք այդ լրացումների գործածության ոլորտներն ըստ հնարավոր խմբավորումների:

- Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառեր. քավորով հարսանիք, տերտերով թաղում, բարեկամներով խրախճանք, ընկերով մահ:

- Սննդի և սննդամթերքների անվանումներ ցույց տվող բառերում, որոնք իրենց հերթին լինում են մի քանի տեսակ.

ա/ կենդանական աշխարհի անուններով արտահայտված սննդի և սննդամթերքների անվանումներ ցույց տվող բառեր. թոքով տապակա, ձկով ապուր,

ուստրեով ուտեստ, հավով փլավ, յուղով փլավ,

բ/ բուսական աշխարհի անվանումներով արտահայտված սննդի և սննդամթերքի անուններ ցույց տվող բառեր. բազուկով աղցան, լիմոնով տորթ, նուշով կոնֆետ, բրնձով փլավ, ընկույզով մուրաբա, բիբարով տոլմա, ելակով սերուցք, ուրցով թեյ, խնձորով ջեմ, դաղձով թուրմ և այլն,

գ/ ընդհանրապես սննդամթերքի անվանումներ ցույց տվող բառեր. մսով կարկանդակ, չամիչով կեքս, կրեմով թխվածք, երշիկով բրդուճ, պանիրով խաչապուրի, հացով պանիր, կաթով խմոր, կաթնաշոռով բլիթ, դրոժով հաց, մեղրով կարագ, ջնարակով պանրիկ և այլն:

• Կենդանական աշխարհի անվանումներ արտահայտող բառեր. ձիով ասպետ, շնիկով տիկին, փղիկով նկար, փիսիկով շոր, արջուկով կոնֆետ և այլն:

• Բուսական աշխարհի անվանումներ արտահայտով բառեր. կակաոյով կոնֆետ, սուրճով կոնֆետ, ծաղիկով շոր, կակաչներով նկար, վարդով մազակալ և այլն:

• Բնության և ֆիզիկական երևույթների անվանումներ ցույց տվող բառեր. վազքով քայլ, քայլով արշավ, թռիչքով վազք /վերելք/, քայլով պար, ձյունով անձրև, անձրևով բուք, ձյունով քամի, արևով անձրև, եռացում ջերմութամբ, սնուցում տաքությամբ:

• Նյութ ցույց տվող բառեր, որոնք ունեն պարունակաության և բաղկացության իմաստներ. սոսնձով աշխատանք, ոսկով կարաս, գինով բաժակ, մոմով լույս, թանաքով գիր, քարով մատանի, ջրով աման, աղով բլիթ, բենզինով մեքենա, փայտով կրակ, թթվածնով բարձիկ, մատիտով նկար, ջրաներկով աշխատանք, կավով աշխատանք, կղմինդրով տանիք, ապակիով պահարան և այլն:

• Տեխնիկական սարքավորումների, էլեկտրական ապարատների անվանումներ ցույց տվող բառեր. հեռախոսով խոսակցություն, փականով դուռ, ձայնագրիչով հեռախոս, լարով հեռախոս, ալեհավաքով կապ, հեռակառավարմամբ դարպաս:

• Գրենական պիտույքների անվանումներ ցույց տվող բառեր. գրիչով նկար, շապիկով տետր, նկարով ալբոմ, կազմով գիրք, տողով տետր, գելով գրիչ, գնդիկով գրիչ, ռետինով մատիտ, փոխադրիչով քանոն:

• Բժշկության մեջ գործածվող տերմիններ և անվանումներ արտահայտող բառեր. արատով սիրտ, կաթվածով հիվանդ, սողայով հոգնա, յոդով ողողում, սպիրտով մերսում, ցինկով քսուք, ծծումբով լուծույթ, դեղով լվացում, լուծույթով լվացում, ցավազրկողով ներարկում, կարմրուկով հիվանդ, կոտրվածքով տուժած և այլն:

• Մարմնի մասեր և օրգաններ ցույց տվող բառեր. ոտքով հարված, մարմնով դող, սրտանց խոսք, սապատով քիթ, ձեռքով հարված:

• Մարդու արտաքինը նկարագրող բառեր. փորով մարդ, մորուքով ծերուկ, մազով մարդ, սպիով դեմք, կեղծամով աղջիկ, բեղերով պարոն:

• Մարդու ներքին հատկանիշները նկարագրող բառեր. ճաշակով կին, կյանքով հարուստ, հոգով աղքատ, խելքով մարդ, զգացմունքով երեխա, գիտելիքով հարուստ, հեզմանքով պատասխան:

• Ժամանակ ցույց տվող բառեր. գիշերով այցելություն, ցերեկով ճաշ, անհետացում օրերով, տարիներով կորուստ, ուշացում շաբաթներով:

- Աշխատանքային գործիքների անվանումներ ցույց տվող բառեր, որոնք արտահայտում են ձևի և միջոցի իմաստ. սուսերով պար, դանակով հարված, բահով փորվածք, դուրով նախշ, շաղափով անցք, կտրիչով կտրվածք, ասեղով աշխատանք, շյուղով գործվածք, գնդիկով ասեղ, վրձնով հարված:

- Ջինատեսակների անվանումներ ցույց տվող բառեր, որոնք արտահայտում են ունենալու հարաբերություն. գենքով պահակ, հրացանով որսորդ, նետով աղեղ, աղեղով նետ, սաղավարտով զինվոր, տանկով գումարտակ, մեքենայով մարդ:

- Կենցաղում և առօրյայում գործածվող առարկաների անվանումներ ցույց տվող բառեր. ակնոցով երիտասարդ, ձեռնափայտով ծերուկ, խաղալիքով պարկ, պարկով ալյուր, նվերներով ծանրոց, ամանով ջուր, դուլյով կաթ, մրգով ափսե, ականջօղով օրիորդ:

- Չագուստի մասեր ցույց տվող բառեր. գլխարկով տիկին, ձեռնոցով երեխա, վերարկուով աղջիկ, օձիքով վերարկու, գլխաշորով տատիկ, գուլպայով երեխա, թևով շոր, կոճակով բլուզ, գոտիով զգեստ:

- Մի շարք թանձրացական գոյականներ. երգով պար, պարով երգ, կառքով պարոն, դարպասով պարիսպ, պատուհանով սենյակ, զարդանախշով գորգ, հրամանով կանչ, վարագույրով պատուհան, ծածկոցով բազմոց, գնդակով խաղ, գորգով հատակ, ապրուստով գյուղացի, վազքով մարշ, նվագով ծնունդ, ընկերներով քեֆ:

#### **ОСОБЕННОСТИ СУБСТАНТИВНЫХ ОПРЕДЕЛЕНИЙ В ФОРМЕ ОТЛОЖИТЕЛЬНОГО И ТВОРИТЕЛЬНОГО ПАДЕЖЕЙ**

*S. K. Khandanyan*

В статье представлены определения и классификация разных лингвистов касательно словосочетаний, их схожести и различий.

Рассмотрены именные словосочетания, имеющие субстантивированные определения в отложительном и творительном падежах. Последние представлены определенными семантическими группами, отражающими разные отрасли и сферы жизни.

#### **THE PECULIARITIES OF THE NOUN ATTRIBUTE EXPRESSED BY ABLATIVE AND INSTRUMENTAL CASES IN THE NOMINAL WORD-COMBINATIONS**

*S. K. Khandanyan*

The definition and classification of the word-combinations are presented in the article. The nominal word-combinations that have noun attribute with ablative and instrumental cases are studied, which are presented in certain semantic groups according to different spheres of life.